

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒՆՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2013

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մամուլում հրապարակման ենթակա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի գործունեության

Մամուլում հրապարակման ենթակա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) 2012 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան և ամփոփ (համառոտ) տեղեկություններ է պարունակում Հանձնաժողովի գործունեության, կարգավորվող ոլորտի կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումների, ինչպես նաև իր գործունեության ֆինանսական հաշվետվության մասին:

Հաշվետվությունը մշակվել և ամփոփվել է Հանձնաժողովի աշխատակազմի բաժինների կողմից ներկայացված տեղեկատվությունների հիման վրա և քննարկվել ու հաստատվել է Հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի թիվ 5 նիստում:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է եղել օրենքներով ամրագրված գործառույթների և Ազգային ժողովում հրապարակված 2012 թվականի գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը:

ՀԱՍՏՈՒՑ ՏԵՐԵՎԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը իրականացնում է հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորումը՝ նպատակ ունենալով օրենքով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների ու հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը, խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Կարգավորվող ոլորտներն են՝

ա) էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը.

բ) ջրային համակարգը, որը ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը.

գ) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը.

դ) տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառը.

ե) փոստային կապի բնագավառը.

զ) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը՝ սակագների սահմանման և վերանայման մասով:

Նշված ոլորտներում ծագող հարաբերությունները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով, «էներգետիկայի մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով:

Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման և արդյունավետ ներդրումների խրախուսման ապահովման առաջնահերթություններից:

2012 թվականին Հանձնաժողովը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացրել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքների նախագծեր, որոնք ընդունվել և ուժի մեջ են մտել 2013 թվականին:

Օրենսդրական փոփոխությունների և իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացքում Հանձնաժողովը ակտիվ համագործակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության, արտադրական ենթակառուցվածքների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական և ազգային վիճակագրական ծառայությունների հետ:

Օրենքով սահմանված կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում Հանձնաժողովը հրապարակել է հաջորդ տարվա իր գործունեության ծրագիրը: Հանձնաժողովը իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով:

Աշխատակազմի կողմից նախապատրաստվել է Հանձնաժողովի 19 հերթական, 4 համատեղ (3 հերթական և 1 արտահերթ) նիստ, որտեղ քննարկվել ու ընդունվել է 135 որոշում, այդ թվում՝ 33 նորմատիվ, 5 լուրջ և 97 անհատական ակտեր: Հանձնաժողովի նիստերին մասնակցել են պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի նախագահի մոտ կայացած խորհրդակցությունների և նիստերի արդյունքներով տրվել են 12 հանձնարարականներ, որոնք կատարվել են սահմանված կարգով: Ստորագրվել է 522 հրաման, որից 343-ը մոնիթորինգների և ստուգումների իրականացման համար էին:

Տարվա ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմ մուտք է գործել 1168 գրություն, ընդ որում՝ 114 նամակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունից և պետական կառավարման մարմիններից, 342-ը՝ հիմնարկ-ձեռնարկություններից և այլ մարմիններից: 103 գրություններ լիցենզավորման ու սակագների վերաբերյալ հայտեր էին, որոնք տեղում ուսումնասիրվել են և ընթացքավորվել:

Հանձնաժողովի կողմից հարուցվել է 5 վարչական վարույթ՝ որից 2-ը ավարտվել է նախազգուշացմամբ, 3-ը կարճվել խախտումը վերացնելու հետևանքով:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի պաշտոնական www.kargavorum.nkr.am վեբ կայք է այցելել 2919 այցելու, այդ թվում՝ 2827-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից և Հայաստանի Հանրապետությունից, 15-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 12-ը՝ Ադրբեյջանից, 8-ը՝ ԱՄՆ-ից, 7-ը՝ Մեծ Բրիտանիայից, 5-ը՝ Գերմանիայի Հանրապետությունից, 45 այցելու՝ այլ երկրներից:

Վեբ կայքում 2012 թվականի ընթացքում տեղադրվել է 81 տեղեկատվություն և 22 հայտարարություն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ռադիոհեռուստաընկերությամբ լուսաբանվել և հեռարձակվել է Հանձնաժողովի 20 նիստ, «Վեստնիկ» լրատվական թողարկմամբ լուսաբանվել և հեռարձակվել է 7 նիստ: «Հ1», «Հ2», «Արմենիա» և «Շանթ» հեռուստաընկերություններով հեռարձակվել է Հայաստանի Հանրապետության հանձնաժողովների հետ համատեղ նիստերը: Արցախի հանրային հեռուստաընկերությամբ հեռարձակվել է 3 հարցազրույց: 3 անգամ հարցազրույց է տրվել «Ազատ Արցախ» թերթին և 1 անգամ «168 ժամ» թերթին: Հանձնաժողովի 6 նիստ լուսաբանվել է «Երկիր» և 3 նիստ «Karabakh-open.info» էլեկտրոնային թերթերով: 3 անգամ հարցազրույց է տրվել «Ազատություն» ռադիոկայանին: ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի միջնորդությամբ 6 լրագրողներ մասնակցել են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից կազմակերպված միջազգային սեմինարներին գ. Հանքավանում և գ. Աղվերանում:

Հրապարակային լուսումների ընդհանուր քանակը 2012 թվականին կազմել է 178:

Հանձնաժողովի աշխատակիցների կողմից իրականացվել են թվով 31 գործուղումներ, որից 10-ը՝ ԼՂՀ շրջաններ, 15-ը՝ ՀՀ համապատասխան հանձնաժողովներ, 6-ը՝ արտերկրներ (Հունգարիայի Հանրապետություն՝ 2 անգամ, Սլովենիայի Հանրապետություն, Գերմանիայի

Հանրապետություն, Բելգիայի Թագավորություն և Իսրայելի Հանրապետություն): Նշված գործուղումների ժամանակ տեղի ունեցած սեմինար քննարկումներին ակտիվ մասնակցելու համար Հանձնաժողովի 5 աշխատակիցների տրվել են 7 սերտիֆիկատներ, որից համապատասխանաբար՝ 6-ը ԵՄ թվինինգ ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում կայացած սեմինարներին մասնակցելու, 1-ը՝ Հունգարիայի Հանրապետության մայրաքաղաք Բուդապեշտում կայացած «Էներգետիկայի կարգավորման տեսությունը» թեմայով ուսումնական դասընթացներին մասնակցելու համար:

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՈՒՈՐՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանրային ծառայությունների ոլորտում 2012 թվականին կատարվել են զգալի աշխատանքներ *էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման, ջերմամատակարարման և ջրամատակարարման* համակարգերի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Այս ոլորտի վերաբերյալ ընդունվել է 7 նորմատիվ և 22 անհատական ակտեր:

Տարվա ընթացքում ուսումնասիրվել են վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերը:

«Արցախզագ» և «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերությունների համար մշակվել և հաստատվել են մի շարք հաշվարկային մեթոդիկաներ:

Խմելու ջուր մատակարարող ընկերություններում ներդրվել են ծառայությունների մատուցման որակի ցուցանիշների գրանցամատյանները և տեղեկատվության ներկայացման ձևերը:

Ուշադրության կենտրոնում մշտապես եղել է լիցենզավորված անձանց լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը: Լիցենզիայի պայմանների կատարման վերահսկման, հաշվետվությունների և տեղեկատվությունների հավաստիացման ճշգրտման նպատակով կազմակերպվել և պահանջվել է լիցենզավորված անձանց գործունեությունը հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթեր և իրականացվել ուսումնասիրություններ, լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ:

Հանձնաժողովը օրենսդրությամբ սահմանված կարգով, գործունեության տարբեր տեսակների համար տրամադրել է 8 լիցենզիա և 1 թույլտվություն, երկարաձգել՝ 2 լիցենզիաների և 2 թույլտվությունների գործողության ժամկետները: Մասնավորապես, տեղում ուսումնասիրություններ կատարելուց հետո էլեկտրական էներգիա արտադրելու համար լիցենզիաներ են տրամադրվել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ «Մատաղիս-1» և «Մատաղիս-2», «Պրոտոն» ՓԲԸ «Սյունիք-2» փոքր հիդրոէլեկտրակայաններին:

Իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվել է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի, նվազագույն ծախսերի և ողջամիտ շահույթի ապահովման սկզբունքի վրա՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր: Այս տեսակետից սահմանվել է լիցենզավորված անձանց համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներկրվող բնական գազի ներկրման առավելագույն սակագինը՝ կախված ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքի և ներմուծվող բնական գազի միջին կալորիականության մեծություններից:

Սահմանվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի 2013 թվականի վաճառքի սակագները:

Վերանայվել և սահմանվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման, ինչպես նաև սպառողներին վաճառվող բնական գազի սակագներ:

Հանձնաժողով հայտ է ներկայացվել «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների 37 համայնքներում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման

սակագնի սահմանման վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից հայտը ուսումնասիրվել է և առաջարկվող 371 դրամ/մ³-ի (ներառյալ ԱԱՀ) փոխարեն սակագինը սահմանվել է 100 դրամ/մ³ (ներառյալ ԱԱՀ):

«Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագնի վերանայման հայտ է ներկայացվել Հանձնաժողով, որով առաջարկվում էր միասնական սակագին սահմանել 155 դրամ/մ³(ներառյալ ԱԱՀ): Հանձնաժողովի կողմից ներկայացված սակագինը չի ընդունվել և ամսական մինչև 10.0 հազ. մ³ սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հազար մ³ բնական գազի սակագինը թողնվել է անփոփոխ՝ 132000 դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ ամսական 10.0 հազար մ³ և ավելի սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հազար մ³ բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման համար սահմանվել է հաշվարկային բանաձև:

«Զրնուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից հայտ է ներկայացվել Հանձնաժողով խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագնի վերանայման մասին, սակայն հայտը չի վերցվել ուսումնասիրության փաստաթղթերում և տեղեկատվություններում առկա անձշտումների և անհամապատասխանությունների պատճառով:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեությունը ապահովելու նպատակով, Հանձնաժողովը մշակել է աշխատառձ` ուղղված սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

Հեռահաղորդակցության՝ այդ թվում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում 2012 թվականին ընդունվել է 78 որոշում՝ որից 17-ը՝ նորմատիվ, 60-ը՝ անհատական և 1-ը՝ լոկալ: Ընդունվել են «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման», «Հեռուստառադիոընկերությունների հաշվառման մատյանի վարման», «Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման» կարգերը: Հաստատվել են հեռախոսային ծառայությունների մատուցման և այդ ծառայություններից օգտվելու կանոնները:

Տարվա ընթացքում *էլեկտրոնային հաղորդակցության* բնագավառում տրամադրվել է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 24 լիցենզիա և ռադիոհաճախականությունների օգտագործման 4 թույլտվություն: Փոփոխություն է կատարվել 3 լիցենզիայում: Դադարեցվել է կաբելային վերահեռարձակման 1 լիցենզիայի, ռադիոհաճախականությունների օգտագործման 1 թույլտվության և տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 16 լիցենզիաների գործողությունը: Հայտարարվել է մի շարք հաճախականություններով ընդհանուր ուղղվածության ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման 2 լիցենզավորման մրցույթ, որի արդյունքում տրամադրվել է 2 լիցենզիա: Հայտարարվել է նաև 1 հեռուստածրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթ:

2012 թվականին վերանայվել էր *հեռախոսակապի սակագները* և սահմանվել նոր սակագներ ի նպաստ բաժանորդների: Այսպիսով թվային անշարժ հեռախոսակապի սակագները նվազել են 16.6-80%-ով, իսկ ֆիքսված անլար միջերես (WLL) հեռախոսակապի սակագները 25-66.6%-ով:

Սահմանվել են բջջային կապի հետվճարային քարտերի բաժանորդների համար պլատինե, ոսկե, արծաթե և բրոնզե համարների ձեռքբերման ծառայության նոր սակագներ, ինչպես նաև 54,5%-ով նվազել է կանխավճարային քարտերի «Գիշերային» սակագնային պլանի ներսում կիրառվող ընդհանուր: Հանձնաժողովի թույլտվությամբ գեղեցիկ համարի ընտրության ծառայությունը մեկնարկելուց հետո՝ բոլոր տեսակի հեռախոսակապերի համար գեղեցիկ համարի ընտրության ծառայությունը մատուցվում է միանման սակագներով:

Շարժական հեռախոսակապի բաժանորդների համար սահմանվել են «Մերոնցով», «Շահավետ» սակագնային պլանները և նոր 6 այլընտրանքային ծառայությունների սակագները:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից տրված համաձայնության հիման վրա ընկերության կողմից հայտարարվել են 8 հրապարակային օֆերտաներ:

Հանձնաժողովի և գերիշխող օպերատոր՝ «Ուրաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության միջև տեղի ունեցած քննարկումների արդյունքում *տվյալների հաղորդման և*

ինտերնետ հասանելիության ծառայությունների նվազեցված սակագներ են սահմանվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար 30%-ով, դպրոցների՝ 90%-ով, իսկ տարեվերջին գործող սակագների նկատմամբ 79%-ով:

Սահմանվել են նաև նոր «Գիշերային արագություն» հավելյալ ծառայության սակագները, որի շնորհիվ ինտերնետ ծառայության բաժանորդները հնարավորություն ստացան գիշերային ժամերին կրկնապատկել ինտերնետ կապի արագությունը:

Հանձնաժողովի որոշմամբ կրկնակի ավելացվեցին ինտերնետ արագությունները, ընդ որում նվազագույն արագության շեմը սահմանվեց մինչև 512 կբիթ/վ: Նոր, 33.9-59.5%-ով, նվազեցված ամսավճարներ սահմանվեցին ինտերնետ կապի DSL մոդեմ և օպտիկամանրաթելային տեխնոլոգիաների համար:

Ընդլայնելով մատուցվող ծառայությունների ցանկը՝ սահմանվեցին նաև մինչ այդ չմատուցվող մինչև 10 Մբիթ/վրկ, 20 Մբիթ/վրկ և 30 Մբիթ/վրկ արագությունների ամսավճարներ՝ օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի համար:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք մուտք գործող միջազգային IP տարանցման հոսքերի ընդհանուր թողունակությունը տարեվերջին կազմել է 1600 Մբիթ/վ., որը 2012 թվականի հունվարի 1-ի՝ 425 Մբիթ/վ.-ի, համեմատությամբ աճել է մոտ 3.7 անգամ:

Տրամադրված ռադիոհաձախականության օգտագործման թույլտվությունների հիման վրա կատարվել է 2012 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե մուտքագրման ենթակա ռադիոհաձախականությունների օգտագործման տարեկան պարտադիր վճարների հաշվարկ՝ յուրաքանչյուր եռամսյակ տնտեսավարողներին ներկայացնելով համապատասխան հաշվարկային փաստաթղթերը:

Հանձնաժողովը **տնտեսական մրցակցությունը** դիտելով որպես շուկայական հարաբերությունները խթանող և կարգավորող ուժ ու ներկայիս համաշխարհային ճգնաժամային իրավիճակից դուրս գալու կարևորագույն միջոց՝ այդ բնագավառում իրականացրել է աշխատանքներ՝ ուղղված մրցակցային միջավայրի հետազոտությանը, գնային քաղաքականությանը, գերիշխող դիրքի և հակամրցակցային գործողությունների բացահայտմանը: Ընդունվել է այդ բնագավառին առնչվող 18 որոշում, որոնցից 11-ը՝ անհատական, 7-ը՝ նորմատիվ:

2012 թվականին ուսումնասիրությունների և մոնիթորինգների արդյունքում գերիշխող դիրք ունեցող են ճանաչվել 13 տնտեսավարող սուբյեկտ 30 ապրանքային շուկաներում:

Հանձնաժողովի կողմից տարվա ընթացքում ուսումնասիրություններ են իրականացվել «Դեղերի շրջանառության ոլորտ», «Նրբերշիկ», «Հավի ձու», «Մսանթերք», «Հանքային ջուր», «Հաց», «Ցորենի ալյուր», «Բնական գազ» և «Կարագ» ապրանքային շուկաներում:

Որոշ դեպքերում ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովին հաջողվել է բացառել չհիմնավորված գնի կիրառումը:

«Հաց» և «Ցորենի ալյուր» ապրանքային շուկաներում գների կարգավորման նպատակով Հանձնաժողովի միջնորդությամբ տեղի է ունեցել ընդլայնված խորհրդակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի, կառավարության անդամների, ցորենի ալյուր և հաց արտադրող ընկերությունների մասնակցությամբ: Արդյունքում 1 կգ պարենային ցորենի ձեռքբերման նվազագույն գինը սահմանվեց 150 դրամ, 1 կգ բարձր կարգի ալյուրի առավելագույն գինը՝ 234 դրամ, իսկ 1 հացի (320-340գր) իրացման գինը մնաց անփոփոխ՝ կազմելով 110 դրամ:

Մրցակցային իրավիճակի ուսումնասիրության համար առաջին անհրաժեշտության ապրանքային շուկաների ընտրությունն իրականացվել է հաշվի առնելով նախորդ տարում ուսումնասիրությունների ժամանակ ի հայտ եկած խնդիրները: Գների դիտանցումը լինելով ապրանքային շուկաներում գնագոյացմանը հետևելուն և վերահսկելուն ուղղված միջոցառում, ինչպես նաև արհեստական գնաձի գսպման գործոն՝ Հանձնաժողովը իրականացրել է առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների 59 դիտանցում՝ 60 առևտրի օբյեկտներում և կատարել դրանց արդյունքների վերլուծություն:

Մոնիթորինգների արդյունքում էական փոփոխություններ է արձանագրվել մի շարք ապրանքային շուկաներում, մասնավորապես՝ գների իջեցում է արձանագրվել «Հնդկաձավար», «Ոսպ», «Պանիր», «Կարագ», «Շաքարավազ» ապրանքային շուկաներում, իսկ առավել մեծ

գնաձ տեղի է ունեցել «Այուր», «Յուղ», «Ձեթ», «Թեյ», «Բենզին», «Դիզելային վառելիք» ապրանքային շուկաներում:

2012 թվականին Հանձնաժողովի կողմից Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով 52 դիտանցում, որոնց արդյունքում 17 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող խանութների դիմային մասերում հայտնաբերվեց ոչ ճիշտ գեղչերի արտապատկերում (արտապատկերված գեղչերը վերաբերում էին ոչ բոլոր ապրանքատեսակներին, սակայն դրանց մասին գրառումը առկա չէր), բացահայտվեց ու արձանագրվեց նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծվող և իրացվող երշիկեղեն, որոնց վրա բացակայում էին արտադրության, պիտանելիության ժամկետները և օրենքով նախատեսված այլ տվյալներ: Առաջադրված պահանջների շնորհիվ նշված խախտումները վերացվեցին:

Առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների և անբարեխիղճ մրցակցության հնարավոր դեպքերի բացահայտման նպատակով դիտանցումներ են իրականացվել նաև Ասկերան, Մարտունի, Մարտակերտ, Հադրութ և Շուշի քաղաքներում և կատարվել են դրանց արդյունքների վերլուծություն:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության ծառայություն մատուցող «Տեխնոսերվիս» ՍՊ և **Փոստային կապի բնագավառում** լիցենզավորված «Արցախփոստ» ՓԲ ընկերությունների կողմից Հանձնաժողով են ներկայացվել եռամսյակային, կիսամյակային և տարեկան արդյունքներով ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել են նրանց ֆինանսական գործունեության արդյունքների վերլուծություն և տրվել համապատասխան առաջարկություններ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից ստորագրված համաձայնագրերի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված փորձի փոխանակմանը, վարչական վարույթների իրականացմանը, տեղեկատվության տրամադրմանը, օրենսդրական ակտերի մշակմանն և կիրառմանը:

Համագործակցության շրջանակներում իրականացվել են փոխադարձ այցելություններ, ուսումնասիրություններ և դիտանցումներ, համատեղ նիստեր և մամլո ասուլիսներ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանձնաժողովի միջնորդությամբ վերանորոգվել և տեխնիկական հագեցվածությամբ ապահովվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Աստղաշեն և Պատարա գյուղերի դպրոցների համակարգչային դասարանները: Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կազմակերպված տարաբնույթ միջոցառումներին:

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից հրապարակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի պաշտոնական տեղեկագիրը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնաժողովը 2012 թվականին իրականացրել է համապատասխան օրենսդրական, մեթոդական, հսկողական և վերահսկողական աշխատանքներ՝ ապահովելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի **349 075.2** հազ. դրամ մուտքեր, որը նախորդ տարվա **322 944.1** դրամի դիմաց ավել է **8.1** տոկոսով, այդ թվում՝

կարգավորման պարտադիր վճարներ՝ **79 372.4** հազ. դրամ,

ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարներ՝ **243 932.2** հազ. դրամ, պետական տուրքեր՝ **25 770.6** հազ. դրամ:

Հանձնաժողովի և Հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախսերը իրականացվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն: Ըստ բյուջետային ֆինանսավորման հայտի (նախահաշվի) պահպանման ծախսերը հաստատվել են **76 563.8** հազ. դրամ՝ դրամարկղային ծախսը կազմել է **72 734.5** հազ. դրամ կամ կատարվել է **95** տոկոսով:

Հանձնաժողովը նախատեսում է հետևողականորեն իրականացնել հաստատված ծրագրերը և միջոցառումները՝ ապահովելու օրենսդրությամբ ամրագրված պարտականությունների կատարումը՝ ուղղված հանրային ծառայությունների, տնտեսական մրցակցության պաշտպանության ու հեռուստատեսության և ռադիոյի բնագավառներում կարգավորվողների և սպառողների շահերի հավասարակշռմանը, հանրության կողմից բարձրացվող խնդիրների, առաջարկությունների արդարացի և անկողմնակալ քննարկամանն ու լուծմանը:

2012 թվականի գործունեության հաշվետվությանը մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով www.kargavorum.nkr.am վեբ կայքի գործունեություն բաժին: